ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2

12.03.2021թ. թվականին կնքված N ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/18-1 գնման պայմանագրի

ք. Երևան «12» 08 2021թ.

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրենի ժ/պ՝ Գ. Ավետիսյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ը, ի դեմս տնօրեն Կ. Հարությունյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, «Գնումների մասին» ՀՀ օրենսդրությամբ, հիմք ընդունելով 12.03.2021թ. կնքված N ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/18-1 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 1.1, 8.5 և 8.8 կետերը և հաշվի առնելով, որ Գնորդի մոտ չի վերացել գնման պահանջը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1. Պայմանագրի Հավելված 1-ով սահմանված մատակարարման ժամկետները խմբագրել և ներկայացնել հետևյալ շարադասությամբ՝ «Պայմանագրի շրջանակներում 06.08.2021թ. կնքված համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից սկսած՝ 80 օրացուցային օրվա ընթացքում»:

2. Այլ պայմաններ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Կողմերի պատասխանատվության հետ կապված այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ	«Էյչ Գրուպ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 78	ՀՀ, ք. Երևան, Բաշինջաղյան 1փ., 13/30
«Կոնվերս բանկ» ՓԲԸ	«Արմսվիսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930000358920100	Հ/Հ 25000010488760100
ՀԿՀ 00000911	ՀԿՀ 01254973
տնօրենի ժ/պ ---------- Գ. Ավետիսյան	տնօրեն ---------- Կ. Հարությունյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ.	Կ.Տ.